№ 185 Հոկտեմբերի 26 (Նոյեմբերի 7) **1879** Հոկտեմբերի 26 (Նոյեմբերի 7) № 185

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարվանը 6 րուբլ։

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ահա մի նորութիւն։—Ներքին տեսութիւն։ Տնտեսական հարստահարութիւնների առիթով։ Նամակ Ղազախից։ Նամակ Բագուից։ Նամակ Երևանից։ Նամակ Խարկովից։ Նամակ Նուխուց։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ—Տեղեկացոյց։

ԱՀԱ ՄԻ ՆՈՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի ճանապարհորդութենից Թիֆլիս նոր վերադարձած անձինք պատմում են թէ ամբողջ Վանի և Էրզրումի վիլայէթների մէջ չը տեսան ոչ մի հայաբնակ գիւղ և քաղաք, որը այնչափ սոսկալի տեսարաններ ներկայացներ, ինչպէս Մուշը և նորա շրջակայքը։ Աղքատութիւնը այնչափ տիրապետում է այստեղ, որ կանայք և մարդիկ ամեն քայլափոխում պատահում են լերկանդամ, ուսերը ծածկած միայն մի կտոր փալասով։ Նոցին տեսնելով մարդ չէ կարող աչքին հաւատալ թէ սոքա հայեր են և ոչ թէ թափառական գնչուների մի ցեղ, որը չունի ոչինչ պարապմունք բացի մուրացկանութիւն։ Մինչդեռ ինչ է յայտնվում. այս բոբիկ և տկլոր մարդիկ հողագործ և աշխատող հայեր են, որոնց աշխատասիրութեան օրինակ քիչ կարելի է գտնել, բայց ինչ արած որ նոցա աշխատածը իրանց չէ պատկանում, այլ մասամբ քիւրդ և տաճիկ բէգերին, մասամբ էլ Ս. Կարապետի վանքի անսիրտ վարդապետներին։ Վարդապետների թիւը անցնում է երեսունից, որոնցից իւրաքանչիւրը ունի իր զուտարիւն ձիերը, իր փառաւոր ապրուստը, փարթամ հիւրընկալութիւնը և վանքից դուրս պէսպէս զուարճութիւններ։ Բոլոր այդ շքեղ կենցաղավարութիւնը նոքա պահպանում են անբաղտ ժողովրդի հաշվով, նորանից ստացած «պտղի» կոչված հարկով։ Հաւատացնում են որ եթէ տաճկական վարչութիւնը ստանում է հայ գիւղականից, ինչպէս հարկ, նորա երեք ոչխարից միայն մէկը, վարդապետը խլում է մնացած երկուսը, էլ բնաւ չը հոգալով խեղճ հայի սովամահ ընտանեաց վրա։ Եւ ժողովուրդը խիստ վախենում է վարդապետներից, որովհետև նոքա միշտ սերտ յարաբերութիւններ ունեն աւազակների հետ, որոնց օգնութեամբ պատժում են անհնազանդներին չարաչար կերպով։ Եւ այս կերպ Մուշը և նորա շրջակայքը դառել են մի ընդհանուր սորկանոց, որտեղ հազարաւոր հայ ժողովուրդը ապրում է միայն մի քանի բէգերի և մի քանի վարդապետների քէֆի համար։ Ուսումնարան, ազգային եռանդ, ինքնաճանաչութիւն բոլորը տեղի են տուած խեղճութեան, թշուառութեան և մերկութեան։ Դարձնում ենք Կ. Պօլսի պատրիարքարանի և ընկերութիւնների ուշադրութիւնը այս աչքից ընկած հայերի վրա, որոնց լուսաւորչադաւան լինելը նոցա այսչափ անբաղտութիւն է բերում հայ վարդապետների շնորհիւ։ Թող նմանապէս Կ. Պօլսի երիտասարդութիւնը փոխանակ Մուշի արախչիններով դոն-քիշոտութիւններ անելու, նախ միամտէր մեցիների մերկ գլուխը ծածկելու, իսկ յետոյ փոխ առնելու նոցանից նոցա գլխի զարդը....

Գ. Ն.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

—

«Աղա, օղլուշաղս հիւանդ ա, խօխէքս անտէր են, հախըս տուր, ինձ մուրախաս արա» խնդրում է հայ մշակը գործարանատիրոջ, իսկ վերջինը կատաղաբար մերժում է մշակի իրաւացի պահանջը աւելացնելով—«սատկի քո օղլուշաղդ էլ, խօխէքդ էլ, գործս ա մնում։»

Ահա ինչ ձայներ են լսվում Կովկասի մի ծայրում, ահա ինչ հեկեկանքներ են լսվում։ Մեզանում, գործարանական արդիւնագործութիւնը խլում է ազատ մշակին մայր հողից և ժողովելով գործարանների մէջ, կապում է նրան տնտեսապէս. բանական մարդը դառնում է մեքենայի անբան մասերից մէկը, մոռացվում է հոգեկան և բարոյական մարդը, իսկ մնում է միայն մի ֆիզիկական ույժ, որը հարկաւոր է գործածել աւելի բախտաւորների նիւթական բարիքները և յարմարութիւնները բազմապատկելու համար։ Սակայն այս պատկերը ժամանակ է պահանջում իր կատարելագործութեան համար, մինչդեռ մենք արդէն լաւ ծանօթ ենք տնտեսական հարստութիւնների ուրիշ տեսակների հետ։—Ո՞վ չը գիտէ այն արիւնարբու չարչիներին, որոնք տարածված գիւղերում, ծծում են խեղճ գիւղացիների արիւնը. ո՞վ չը գիտէ այն ճարպիկ պարոններին, որոնք առնելով իրանց ձեռը հացի պաշարները, կրկնապատիկ թանգ ուտացնում են մեզ. որտեղ չը կան այն անամօթ վաշխառուները, որոնք սարդի նման իրանց անվերջ տոկոսիքների թելերի մէջ խեղդում են պարտականներին։ Հայաստանի կենտրոնից են հաղորդում, որ Վանի հայ վաճառականների հարստահարութիւնները աւելի տաժանագին և ծանր են հայ գիւղացու համար, քան քիւրդի և չերքեզի ասպատակութիւնները և բարբարոսութիւնները. վերջիններից ազատվելու յոյս կայ, իսկ առաջիններից՝ եթէ չասենք անկարելի է, գոնէ շատ դժուար է։

Վաճառականը ամեն տեղ հարստահարող է. հայը եթէ ատելի է օտարներին, սրանով նա պարտական է իր վաճառականական դասին, թէպէտ ուրիշ ազգերի վաճառականներ իրանցից Արիստիդէսներ չեն ներկայացնում. վաճառականը հեշտութեամբ ոտի տակ է տալիս բարոյական պրինցիպներ, եթէ բանը հասնում է փողի. հասկանալի է, որ մի այսպիսի շրջան չէ կարող համակրելի անել ազգը օտարների համար։ Այսպէս տնտեսական հարցերը մեծ ուշադրութեան են արժանի մեր կողմից երկու նշանակութեամբ, առաջին՝ ընդհանուրի նիւթական բարօրութեան կողմից, այսինքն մեծամասնութիւնը չէ՞ հարստահարվում փոքրամասնութեամբ, երկրորդ՝ բարոյական կողմից, այսինքն այս կամ այն տնտեսական հանգամանքները ի՞նչ բարոյական դրութիւն են ստեղծում։

«Մշակը», որը միշտ պարապել է տնտեսական հարցերով, չի զլանայ յարձակվելու հարստահարութեան նոր տեսակների վրա. նրա պարտաւորութիւնն է պաշտպան հանդիսանալ մեծամասնութեան օգուտներին, այսպիսի մի պարտաւորութիւն «Մշակը» անպատճառ պէտք է ընդունի իր վրա, մանաւանդ երբ մեր մնացեալ լրագրութիւնը յամառաբար լուռ է տնտեսական հարցերին։

Ն. Աբէլեանց

ՆԱՄԱԿ ՂԱԶԱԽԻՑ

—

20 հոկտ.

Անցեալ գարնան սկզբում, երբ գետինը ծածկվեցաւ կանաչ գորգով՝ այդ իր բնական զարդով և արտերը՝ գարին ու ցորենը նոր էին գլուխները ազատել սաստիկ ցրտաշունչ «բօրանների» ազդեցութիւնից և ձեան կոյտերի տակից, ահա, նոյն այդ միջոցին մի ուրիշ ազդեցութիւն կամ աւելի լաւ է ասել՝ մի ուրիշ թշնամի, նոյն իսկ կանաչեղէնների աճման սկզբումը ոչնչացրեց, գետնին հաւասարեց մօրեխը՝ այդ մարդկութեան ստեղծված պատիժը՝ Ղազախի հիւսիս-արևելեան կողմից սկսած դէպի Գանձակ...

Այդ մօրեխի յայտնվելը Ղազախում, կուր գետի ափերին, վնասեց խեղճ գիւղականներին, վնասեց ոչ միայն նորանով, որ կերաւ նորանց աշխատանաց պտուղը, այլ և նորանով, որ գիւղացիք ստիպված էին թողնել իրանց վարուցանքը, իրանց տունն ու տեղը և հեռանալ, գնալ մօրեխ կոտորելու։

Թէև մօրեխը կոտորելով մի որոշեալ նպատակի չը հասան, գէթ եղաւ նոցա համար մի դաս, մի փորձ, որից ապագայումն օգուտ քաղել իմանան։ Գալ գարնան (յառաջիկայ) մօրեխի հասցնելու վնասներն աչքի առաջ ունենալով, կառավարութիւնը մի հազար րուբլի է նուիրել՝ այդ անկոչ հիւրերին ոչնչացնելու նպատակով։

Կազմվել է մի նահանգական կօմիտէտ Գանձակում՝ պ. նահանգապետ Ճավճավաձէի նախագահութեամբ, թող այդ, կազմվել են և ուրիշ գաւառական մասնաժողովներ, որոնցից մէկն էլ Ղազախումն է պ. Փուրցէլաձէի (գաւառապետ) նախագահութեամբ, 6 անդամներով։ Այս մասնաժողովը իր համար նպատակ է դրել նոյն իսկ այժմեանից մօրեխի դէմն առնել։ Շատ տեղեր գտնում են մեծ քանակութեամբ փամփուշտներ լի ձուաներով մինչև քանի մի հարիւր և կամ հազար. նոքա պէտք է աշխատեն որքան կարելի է փամփուշտներ ոչնչացնել։ Բայց գարնան համար պատրաստում են խոտ և վառելանաւթ, երբ որ մօրեխները ձուաներից կը դուրս գան, այն ժամանակ մասնաժողովը պիտի խոտը դէս ու դէն ցրվի։ Առհասարակ նկատել են, որ նոր դուրս եկած մօրեխները ժողովվում են խոտերի մէջ.—և երբ արդէն ժողոված կը լինեն խոտերի մէջ, իսկոյն և եթ նաւթ կածեն խոտերի վրա և կայրեն։

Այս մի ուրախալի բան է, բայց տեսնենք ինչ արդիւնք կը բերի։

Ա. Գ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

17 հոկտեմբերի

Ազգային գործերում Բագուի հայ հասարակութեան անչարժութիւնը, վերջին ժամանակներս անտանելի է դարձել։ Մարդ ակամայ սարսափում է, երբ մի կողմնակի հայեացք է գցում այստեղի հայերի վրա, որոնք, կարծես թէ, բացի անձնական շահերից՝ ոչ մի ազգասիրական, մարդասիրական կամ մի այլ բարեգործական գործերով չեն կամենում հետաքրքրվել։ Մինչդեռ ամենայն քաղաքներից, ուր կայ անգամ մի փոքրիկ խումբ հայերի, լսվում են ուրախառիթ լուրեր նոցա յառաջադիմութեան մասին ազգային գործերի մէջ, Բագուի հայերը օրից օր առաւել հեռի են փախչում գործողութեան ասպարիզից։

Աններելի է այսպիսի թուլութիւնը մի հասարակութեան կողմից, մանաւանդ Բագուի, որը, պէտք է ասած, նիւթականապէս ապահոված է, քան մի ուրիշը և բացի դրանից ունի մի հարուստ ընկերութիւն «Մարդասիրական» վսեմ անունով զարդարված։

«Մ. ընկերութեան» վրա խօսել հարկաւոր չէ, որովհետև նա ինքն ըստ ինքեան վաղուց յայտնի է «Մշակի» պ. պ. ընթերցողներին իր անգործունէութեամբ, եւ առաւել այս վերջին ժամանակներս, այսինքն պ. նախագահի ոտը կոտրվելուց յետոյ։ Նախագահը ինքն պէտք է ճշմարիտն ասած, որ թոյլ մարդ չէ, այլ պատկանում է գործողների շարքին, բայց ափսոս, որ բացի նիւթականից նա ուրիշ կերպով չէ կարող օգուտ բերել ընկերութեան, որովհետև չունի այնքան զարգացումն՝ բացի վաճառականական նեղ շրջանից ոչինչ չէ ճանաչում ինչպէս ինքն ևս այդ քանի անգամ ինձ մօտ յայտնել է թէ բացի փողից ոչինչով կարողութիւն չունեմ օգնելու։ Սակայն «Մ. ընկերութիւնը» կառավարելու համար բաւական չէ միմիայն շատ փողեր հաւաքել, այլ գլխաւորապէս հարկաւոր են այնպիսի անձինք, որք կարող լինեն այդ փողերով օգուտ բերել ազգին։ Բայց արդեօք կա՞ն այդպիսի անձինք՝ ընկերութեան պահանջներին բաւականութիւն տուողներ. դժբաղդաբար ստիպված ենք ասել թէ, ոչ և ոչ։ Ճշմարիտ է ընկերութիւնը իր միջից ընտրել է պ. Անտօնեանցին իբրև բաւական բարձր ուսում ստացած մի մարդու, ուսումնարանը վերահսկելու և ուրիշ կարգադրութիւնների համար, բայց ինչ անես, որ սա էլ չէ

կարող մի ձեռքով երեք ձմերուկ բռնել, այսինքն կատարել քաղաքային վարչութեան անդամի պաշտօնը, կատարել իր սեփական առևտրական գործերը, բայց մի և նոյն ժամանակ կատարել ևս ընկերութեան պահանջները՝ այդ անկարելի է։ Այն միակ ուսումնարանը որը ընկերութեան հաշւով է պահվում, յանձնված է պ. Անտոնեանցի հսկողութեան, և այժմ շատ անհանգիստ դրութեան մէջ է գտնվում։ Հին տեսուչ Թուսիկեանցը հեռացավ վեց ամսվայ համար ստանալով առանց մի որ և է օգտի 1500 ռուբլ, իսկ նրա տեղը այժմ նշանակված է պ. Ստեփանեանցը։ Մենք չը գիտենք թէ այդ անձն ինչ արժանաւորութիւն ունի, բայց տարակոյս չը կայ, որ սա ևս չէ կարող մի ձեռքով երկու ձմերուկ բռնել, այսինքն կատարել Բագուի նահանգի ռուսաց դպրոցների դիրեկտորի պաշտօնը, որ համարեա տարվայ շատ կէսը պիտի ուրիշ քաղաքներում լինի, և մի և նոյն ժամանակ կատարել իր նոր պաշտօնը. այդ ևս անկարելի է։ Իսկ ինչ վերաբերում է ուսումնարանի վարժապետներին, որանցից երկուսը եկեղեցու տիրացուներից են, մէկը մի քահանայ է, և մի ռուսաց լեզուի վարժուհի, և վերջապէս Աւագ Գրիգորեանցն է, «Սոխակի» հրատարակիչը։ Ինչպէս տեսնում ենք այդպիսիներից շատ օգուտ չէ կարելի սպասել, ուրեմն այն հաղարները որ «Մ. ընկերութիւնը» ծախս է անում ուսումնարանի վրա բոլորովին ի զուր են գնում։

Աչքի առաջ ունենալով այդ հանգամանքները մենք զարմանում ենք, թէ ինչու համար այլ ևս Բագուի հասարակութիւնը այդ ընկերութեան համար առատ գումարներ է զոհում, երբ նոքա իրանց ազգին ոչինչ օգուտ չեն տալիս. լաւ չէր լինի արդեօք որ այդ փողերը տային «Արարատեան» ընկերութեան, որը կարող էր նրանցով տասնեակ աշակերտներ աւելի կրթել Հայաստանի խորքում, քան թէ Բագուի «Մ. ընկերութիւնը». կամ եթէ հասարակութիւնը տալիս է փողը ինչու չէ ստիպում ընկերութեան այդ փողերը ի զուր չը փչացնել վարձելով 2 հատ լաւ ուսուցիչներ, քան թէ 6 հատ տգէտներ. բայց թողնենք այդ դառնաք ուրիշ հարցերին։

Անչուշտ յայտնի կը լինի «Մշակի» մինչորդութեամբ պատուելի ընթերցողներին, որ ահա երկու տարի է որ Բագուում չեն լինում հայերէն ներկայացումներ։ Ինչ է սրա պատճառը. միթէ չը կան այժմ այն ուժերը, որոնք առաջ խաղում էին—ոչ, սա չէ պատճառը, այլ ընդհակառակը սրա պատճառն հայի ամենավատ յատկութիւններից մէկն է—այս անմիաբանութիւնն է, հայերի տունը քանդողը։ Միթէ «Մշակը» իզուր է քարոզում, թէ ինչ տեղ երկու երեք հայ լինեն հաւաքած, այնտեղ անմիաբանութիւն կը լինի, իսկ ամեն մի հայը առանձին առանձին իր համար խելօք է. ափսոս որ սա մի դառն ճշմարտութիւն է մեզ հայերիս համար։ Երկու տարվայ միջոցում կարելի է ասել տասն անգամ մեզանում ժողով է եղել բարեգործական նպատակով ներկայացումներ տալու համար, բայց ոչ մի անգամ չէ յաջողվել։

Մի քանի անգամ էլ ժողովներ եղան հասարակաց ընթերցարան բաց անելու նպատակով, այդ էլ չը յաջողվեց դարձեալ անմիաբանութեան պատճառով։

Վերջացնելով ներկայ նամակը, յոյս ունենք, որ նոր տեսուչ պ. Ստեփանեանցը յանձն կառնէ իր անօրինութեամբ մի ընթերցասիրաց ընկերութիւն հաստատել «Մ. ընկերութեան» հսկողութեան տակ, որպէս զի մեր խեղճ երիտասարդները աղատ ժամանակները կարտ խաղալով և փողոցները թափառելով չը վատնեն։

Ա.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

13 հոկտեմբերի

Մի քանիսը չեն հաւատում Երևանի սովի մասին «Մշակի» հրատարակած թղթակցութեանը և խմբագրի այդ մասին գրված «առաջնորդող» յօդուածի ճշմարտութեանը։ Ինչպէս երևում է սով պէտք է համարել այն ժամանակ, երբ հացի տեղ ժողովուրդը մկան ու կատուի տապակայ ուտելու ստիպված կը լինի։ Մեր կարծիքն այլ է։ Սրանից չորս տարի առաջ ցորենի պուդը 40 կոպէկ արժէր և այդ գնով մարդ կարող էր պատուական ցորեն գնել. իսկ այսօր, հասարակ ցորենի պուդը արժէ 2 ռուբլուց մինչև 20—40 կոպէկ. միթէ աղքատ դասակարգի համար սով չէ՞ այդ։ Ես գիտեմ որ Եւրոպայի արհեստաւորի համար ֆունտը 15 կոպէկով հաց՝ և 30—40 կ. միս գնելը սովի նշան է, միայն թէ այդ գնով հաց ու միս ճարէ նա, բայց մեզանում։—Մեր ստորին աստիճանաւորների ու գրագիրների դասակարգը, եկեղեցիներին ու դպրոցներին ծառայողների խումբը, ձեռնարուեստով ապրողների հարիւրից իննսունը, մանր վաճառականների երամը, որբևայրի և միմիայն լուացքով կամ ուրիշների հաց թխելով ապրողների բազմութիւնը, որոնց տարեկան հասոյթը հազիւ թէ 200—6 կամ 700-ին է հասնում և որոնց թիւը քաղաքիս բնակչաց 3/4-ին է հասնում, ահա, դրանց համար է «Մշակի» ասած սովը և ոչ թէ նրանց համար, որոնք կարող են ֆունտը 30 կոպէկով ևս հաց ճարել և չը սովել։—Մի փոքրիկ օրինակ։

Իմ հարևանը մի արհեստաւոր է. սրա ընտանիքը բաղկացած է 6 հոգուց։ Սրա տարեկան հասոյթն է 5—600 ռուբլի։ Սրան հարկաւոր է տարեկան պաշարի համար քսից 3 խալվար ցորեն։ Նա գնել է խալվարը 63 ռուբլիով։

Ցորենը խախալել, մաքրել, աղուն է արել և ստացել է 2 պուդ պակաս, սովորական հաշւով. 2 պուդը արժէ 4 ռուբլի 40 կոպէկ։ Աղալու վարձ է տուել 3 ռուբլի։ Մի պուդից աւելի ալիւր ջրաղացի քարի շուրջն է նստել, որին ասում են զամբ, որն արժէ 2—3 ռուբլի։ Ջրաղաց տանել ու բերելու վարձ 1 ր. 50 կ.։

Այդ մնացած ալիւրից դուրս կը գայ 3 տաշտ խմոր, որի թխելուն կէս սայլից աւելի վառելափայտ կերթայ, որ քսից կարժի 7 ռուբլ։

Հացթուխ կինը կը ստանայ 3 տաշտ խմորը թխելու վարձ 1ր. 50 կոպ. և 60 հաց, որ կարժենայ 3 ռուբլ։ Գրգնակ քաշողը կը ստանայ 30 հաց, որ 1ր. 50կ. կարժէ և 90 կոպէկ վարձ։ Հացթուխների կեր ու խումը թող արժենայ քսից 1 ր. 50 կոպ. կուտ ու քերին էլ քեզ ընծայ, այժմ տեսնենք թէ խալվարն ինչ արժէ։ 63+4 ր. 40 կ.+3 ր.+3 ր.+150 կ.+7 ր.+150 կ.+3 ր.+150 կ.+90+150 կոպէկ. գումարը 90 ր. 30 կոպէկ. ուրեմն 3 խալվարը կ'արժենայ նրան մօտ 271 ռուբլ։ Երեք սենեակից բաղկացած բնակարանի համար տալիս է տարեկան 150 ռուբլի։ Տարեկան 100 ռուբլ կարժէ նրա վառելիքը և լուսաղները։ Վեց հոգու համար հագուստ ու ոտնաման գնելու՝ հաշուիր 80 ռուբլի։ Ահա քեզ 601 ռուբլ։ Հապա նրա ընտանիքին՝ բացի ցամաք հացից, հագուստից ու բնակարանից ուրիշ ոչինչ չէ հարկաւոր։ Ո՞րտեղից տայ խեղճը թագաւորական ու հոգևոր հարկերը. ինչով ուսում տայ իր աղջիկներին ու տղաներին. ինչպէս ապահովէ նա իր որդոց ապագան. եթէ նրա երեխաները հիւանդանան, ինչով հրաւիրէ մեր թանկագին բժշկներին. էլ չեմ խօսում նրան հարկաւոր եղած պասեղէն ու ուտխեղէն տարեկան ուտելիքի մասին, չեմ խօսում ուրախութեան ու տրտմութեան դէպքերում ծախսելու պիտոյից մասին և այն և այլն։ Բայց ես 600 ռուբլի ստացող ընտանիքի ծախսը հաշուեցի. հապա ի՞նչ անեն այն բազմաթիւ ընտանիքը, որոց օջախի շուրջը 6—10 հոգի է շրջապատում և որոց տարեկան հասոյթը հազիւ թէ 2—300 ռուբլի և շատերինն էլ՝ հազիւ 120—150 ռուբլու է հասնում։ Երանի թէ սրանից աւելի էլ չը բարձրանար ցորենի գինը։ Այս տարվայ խաղողի բերքի առատութիւնը, նաև զանազան թաց պտղեղէնի և մրգեղէնի էժանութիւնը, ինչպէս և կորէկի առատ ցանքը, որ մէկ ու կէս ամսվայ ընթացքում հարուստ հունձ է տալիս, սովի առաջը բռնել են մինչ այսօր։

Բայց միւս կողմից էլ շարունակվում է երաշտութիւնը և աշնանացանքը չոր հողի մէջ փչանում է, մրջիւնի, մկան ու թռչունների կեր է լինում. այս հանգամանքն էլ օգնում է արհեստական կերպով թանգութիւն ձգողներին։ Մեր յոյսը քաղաքային վարչութեան վրա էր, բայց....

Սկոնի

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

—

5 հոկտեմբերի

Լսածս սխալ չէր, այստեղ եկաւ մի ուսուցիչ Շուշու գաւառական ուսումնարանում աւարտած աշակերտներից մէկը։ Խեղճ անփորձ երիտասարդ։ Բողոքը լրագրով իզուր չանցաւ. երէկ եկաւ թեմ. տեսուչը։ Ցեմենք պիտի կարողանայ անաչառ սրով գործեան հանգոյցը կտրել, թէ ոչ։

«Ցէր-ամենակալը» Ռօդէնի խորամանկութեամբ աշխատում է մարդիք որսալ։ Նա այժմ տերևի պէս դողում է, օձի պէս սողում։

Հողաբարձութիւնը ժողովրդի պահանջին հակառակ նրա ընտրած մանդատարին չէ ցոյց տալիս հաշիւները։

Ժողովուրդը վրդովված է։ Այստեղ այժմ ամենայն ինչ չը տեսնված գներով են ծախվում, առևտուրի մէջ ուրացութիւններ մինչև ցայժմ չը տեսնված ձևերով են կատարվում։ Մի այսպիսի դժբաղդ ժամանակ մեր երիտասարդ չինովնիկները թղթախաղից (իրանց մանակից են մեր հոգաբարձուներից երկուսն էլ) չեն կշտանում։ Կանանչ սեղանը սրանց շատ է գրաւում, քան ազգային գործերը։ Սրանց ընկերութեան մէջ անդամ գրվելու համար դու էլ պիտի ասես. «еще-бы, азгаинъ горцеръ...ха, ха...» և ծիծաղես։

Նուխեցի ստոր դասակարգի համար մտածող չը կայ, սրանց վիճակը անտանելի է։ Ցորենը 8 ր. 50 կ. դարձաւ։ Այդ թշուառ դասակարգը յուսով է որ թանգութեան համար լրագրով յայտնված բողոքները առանց հետևանքի չեն մնայ։

Նուխու արհեստաւոր մասի մէջ ցանկութիւն կայ մի լրագրական ընկերութիւն հիմնելու, որ հայոց լրագիրներ ստացվին և կիրակի օրերը մի նշանակեալ տեղ կարդացվին։ Նրանք վերջին ժամանակներս զգացել են որ բէգերը, իշխանները, տէրտէրները աշխատել են իրանց աչքերը կապել (որ պղտոր ջրում հեշտ լինի ձուկ որսալ)։ Առ այժմ նրանք մտադիր են «Մշակ» բերել տալ։ Ուրեմն ես էլ այն ժամանակը ուրիշ մտքով կը կըրկնեմ մեր ծերունի մղդսի Օվանէսի մաղթանքը՝ «Աստուած ողորմի խնամութեան, իշխանութեան և բէգութեան» օրհնութիւնը, որ միշտ հանդէսներում գինու բաժակը ձեռքին օրհնում է։

Օրհնութիւն ասացի և միտս ընկաւ, դեռ մենք Նուխեցիքս մինչև օրս չը կատարեցինք երջանկայիշատակ Ստեփանոս Նազարեանցի հոգեհանգիստը, այն ինչ վրացախօս գործեցիք երկու ամիս մեզնից առաջ կատարեցին։

Էլ «Արարատեան ընկերութեան» համար մէք ասի—մենք օրինակելի ենք։

Անցեալ տարի պ. Ա. Տէր-Յակոբեանցը Նուխու հոգ. դպրոցի աշակերտներից փող է հաւաքել այդ ընկերութեան համար. խեղճ մանուկները իրանց կօպէկները չեն խնայել նուիրելու, բայց թէ ինչ եղան այդ փողերը, ոչինչ չէ յայտնի։

Անցեալ ամսի 16-ին Նուխու ճալէթ անուանված գիւղում 12 աւազակ յարձակվելով Արթին անունով վաճառականի վրա, իր տանը սպանում են նրան։ Բարեբաղդաբար ծառայի ձայնից օգնութիւն հասնելով դրացիները, նրա կինը ազատվում է։ Կինը ճանաչել է աւազակներին։ Երէկ սրանցից մինը բերին Նուխի։ Քննութիւնը չէ սկսված։ Նոյն ամսի 19-ին Վարդաշէնում Դալլաք-օղլի Ղազարին (վրացի) ծառի վրա խաղող քաղելիս գաղանի արձակած հրացանի գնտակով վիրաւորում են։ Շրջականերից շատ սպանութիւնների ձայներ են լսվում. Աստուած վերջը բարի անէ։

Զ.

ՆԱՄԱԿ ԹԱՐԿՕՎԻՑ

—

11 հոկտեմբերի

Սեպտեմբերի վերջի օրերից սկսվեցաւ Թարկովում սուրբ Աստուածածնի Պաշտպանութեան (Покровская) անուանված տօնավաճառի համար պատրաստութիւնը։ Քաղաքի կենտրոնում գտնված լայն հրապարակները ծածկվեցան տախտակաշէն ժամանակաւոր կրպակներով և զանազան տեսակ ապրանքներով։ Սերդէեվեան հրապարակը Լօպան գետի մօտ՝ որտեղ օգոստոսի սկզբից զետեղված էր տախտակաշէն չինութեան մէջ նշանաւոր Գեսների անատոմիական թանգարանը, այժմ ներկայացնում է մի քանի նորաշէն տախտակեայ փոքր կրպակներ և հրդեհի մնացորդներ, պատճառ Գեսների թանգարանը կէս ժամի միջոցում այրվեցաւ մի ծառայի անզգուշութեամբ, որի (թանգարանի) արժողութիւնը 100,000 ռուբլուց աւելի էր և դժբաղդաբար ոչ մէկ ընկերութեան մէջ չէր ապահովված կրակից։ Ամեն ոք, որ այցելել էր վերոյիշեալ թանգարանը՝ իրաւացի ցաւում է այդպիսի հաղուագիւտ և հեռաքրքիր իրեղէնների կորուստի համար։

Տօնավաճառի պատճառաւ ֆաբրիկանտների խանութները և ապրանքների ամբարները (складъ) բացվեցան։ Ձեռակերտված (мануфактурный) ապրանքները այս անգամ աւելի են ծախվում, այնպէս որ թեթև ձեռակերտված ապրանքների (легкая мануфактура ինչպէս չիթ, միթկալ և այլն) գները բարձրացան 10—15% մեծ քանակութեամբ առնողների համար և 15—25% հատով առնողների համար։ Իսկ ծանր ձեռակերտված ապրանքների (тяжелая мануфактура) գները առաւել ևս բարձրացան՝ մանաւանդ ցածր տեսակ մահուդի և դրապի։ Վերջինների գները բարձրացան 18—30% մեծ քանակութեամբ և հատով առնողների համար։ Այս գների բարձրանալը ասում են, հետևանք է կըտաւի և զինուորական մահուդի տէրութեան կողմից սաստիկ պահանջմանը, պատերազմի դաշտից վերադարձող զինուորների համար։ Ասում են որ տէրութիւնը ֆաբրիկանտներին յանձնարարութիւն է արել այս ապրանքներից մի քանի տասնեակ միլիոն արշին և այս պատճառաւ ֆաբրիկանտները զբաղված են կատարել պահանջը և ստիպված են առ ժամանակ դադարեցնել իրանց թէ բարակ մահուդի և թէ չիթի պատրաստութիւնը։ Ֆաբրիկանտները ուղարկելով այս տօնավաճառին իրանց ապրանքների մնացորդները՝ մի և նոյն ժամանակ բարձրացրին գները, բայց ի հարկէ այս ժամանակաւոր է, պատճառ որ տէրութեան պահանջը կամ յանձնարարութիւնը (заказъ—պատուէր), նոյնպէս ժամանակաւոր է։

Մուշտակեղէնի տեղ զանազան անասնոց մորթիների գները նմանապէս բարձրացան և վաճառականները բացատրում են այն հանգամանքով՝ որ մուշտակեղէնների մեծ մասը Նիժնի տօնավաճառից ուղարկված են ուղղակի արտասահման, իսկ խարկով ուղարկված են միայն մնացորդները։

Էժանացաւ չաքարը՝ որ և բերած է բաւականին մեծ քանակութեամբ և գները սկսեցին ցածրանալ 5—17% մեծ քանակութեամբ առնողների համար։ Պատճառն է չաքարանիւթ ճակնդեղի առատութիւնը և մշակների էժանութիւնը՝ հացի անպտղաբերութեան պատճառաւ հարաւային և արևմտեան գաւառներում։

Վառելի նաֆթը, ֆոտոգէնը (керосинъ) հասաւ մեծ քանակութեամբ առնողների համար մինչև 1 ր. 28 կոպ. պուդը, իսկ քիչով առնողների համար պուդը 1 ր. 75 կոպ.։

Բրդեայ ընկերութեան ամբարներում մօտ տասը հազար պուդ լուացած բուրդ կայ՝ մեծ մասը մընացած և առնողների յանձնարարութեամբ նորէն լուացած։ Պերեգոն (перегонъ) անուանված բուրդին առնողները տալիս են 18 ռուբլ, իսկ ծախողները պահանջում են 22 և 23 ռուբլ։ Լուացած բուրդին առնողները տալիս են 36 ռուբլ, ծախողները պահանջում են 40 ռուբլ։ Մասնաւոր անձանց ամբարներում նոյնքան բուրդ կը լինի, բայց առհասարակ չը լուացած (грязная) բուրդը շատ սակաւ։

Առհասարակ տօնավաճառի ընթացքը բաւականին լաւ է և բանկերում դիսկոնտը մնաց առանց փոփոխութեան վեքսելների ուշետով (по учету) 6—8½%, իսկ դրաւականով 7½—10%։

Տօնավաճառի ժամանակ ցորենը ծախվեցաւ 10½ մինչև 11½ ր. չեթվերթը։ Կալուածատէրները չեն պարծենում այս տարի իրանց կալուածների առատութեամբ։ Վաճառանոցում (базаръ) հաճարի ալիւրը (рясаная мука) հասնում է մինչև 80 կոպ. պուդը։ Թխած հացը թանգացաւ ամեն մէկ ֆունտի վրա ½ կոպ.։ Թռչունքը, հիւանդութեամբ կոտորվելու պատճառաւ, հասաւ մինչև 40 կոպ. հաւը և 50 կոպ. վառեակների զոյգը (ջուխտը) և բադերի զոյգը 1 ր. 20 կոպ. մինչև 1 ր. 50 կոպ. Մօտակայ տեղերից բերողները քիչ են, ուստի և բերած մթերքները վաճառանոցում շուտով են ծախվում։ Այժմ սկսեցին կիտել վաճառանոցում ձմեռվան մթերքները. կաղամբը (капуста). ծախվում է 1 ր. 20 կոպէկից մինչև 3 ռուբ. հարիւրը, գետնախնձորը (картофель) տոպրակը 35 կոպ. մինչև 50 կոպ.։ Ճակնդեղը (бураки) 1 ր 50 կոպէկից մինչև 2 ր. 50 կոպ. սայլը։ Փայտը 20—25 ռուբ. երկրորդ տեսակի, սաժէնը 30—36 ռուբ. առաջին տեսակի սաժէնը։ Օրերի և ճանապարհների լաւանալու պատճառաւ, յոյս կայ որ գներն փոքր ինչ վայր ընկնեն։

Աթ. Մելքումեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մոսկվա 17 հոկտեմբերի

«Մշակի» № 170 հրատարակեցիք Պետերբուրգից ձեզ գրած մի լուր, որպէս թէ հանգուցեալ Ագաթոն Ակիմեանցի և Դաւիթ Թամամշեանցի հետ իմ առևտրական և արքունի կապակցների մի քանի միլիոն հաշիւների մէջ, Ակիմեանցի համոզմամբ յետ դցած ունէինք վեթասուն հազար ռուբլի գումար 1853 թուականին, նպատակաւ հիմնելու Անդրկովկասումը մի մեծ դպրոց կամ ակադեմիա։ Իմ ընկերների մահուանից յետոյ այդ գումարը իմ ձեռքը մնալով, այժմ պէտք է հասած լինէր մինչև երեք հարիւր հազարի։ Բայց ես այդ գումարով կամ պակաս չմնել եմ ոչ իմ ընկերների, այլ իմ կնոջ անունով թիֆլիսումը մի օրիորդական դպրոց։

խնդրեմ բարեհաճեցէք ձեր պատուական թերթի մէջ հրատարակել և իմ պատասխանը։

1. Եթէ իմ ընկերները մէկ տարվայ մէջ մեռան, կենդանի մնացին նրանց ժառանգները, մնացին նոյնպէս մեր ընկերութեան պայմանները և վաճառականութեան կանոնների համաձայն մեր հաշիւները։ Անցան քսան և հինգ ընդարձակ տարիներ, որ ես իմ ընկերների կտակակատարներուն. ժառանգների և նշանակած հոգաբարձուների համաձայնութեամբ և օրէնքի համաձայն նշանակած երեք անձերից կազմված անձնաժողովին (Третейскому суду) տուել եմ իմ հաշիւը ընկերական պայմանների, ժապավենաբար մատենի և ընթացիկ գրագրութիւնների համաձայն, և վճարել եմ անթերի նրանց պատկանեալ գումարը, որոնց մասին ստացել եմ ապահովագիր։ Եթէ մեր ընկերութիւնը յետ դցած լինէր մի այսպիսի գումար, հարկաւ այն ժամանակը պիտի պարզվէր և ես պիտի հասցնէի նշանակեալ նպատակին, բայց այդ երբէք չէ եղած։

2) Հանգուցեալ Ակիմեանցը և Թամամշեանցը իւրեանց կենդանութեան ժամանակ Թողին օրինաւոր կտակագիր, որոնցով աւանդեցին իրանց կամքը և վերջին ցանկութիւնները, բոլոր ստացուածքների, նոյնպէս և մեր ընկերութեան վերաբերեալ մանրամասն կարգադրութեամբ։ Եթէ նրանք ունէին մեր ընկերութեան մէջ յետ դցած մի մեծ գումար բարեգործական նպատակաւ, հարկաւ պիտի կդէին, մանաւանդ թէ պիտի պարտաւորէին ինձ և ժառանգաւորացը հոգ տանել տարիներով խնայողութեամբ յետ դցած այդ գումարովը կատարել իրանց ցանկութիւնը։ Բայց այդ մասին ոչ մէկի և ոչ միւսի կտակների մէջ ոչինչ նշմար անգամ չը լինելը, վճռական ապացոյց է, որ մեր մէջ մի այդպիսի նախապատրաստութիւն կամ դրամագլուխ երբէք չէ եղած այդ երևակայական ակադէմիայի։

Այս իմ երկու խօսքը յուսամ թէ լիակատար պատասխան պիտի համարի և ընդունէ ոչ միայն մեզ առիթ տուող «Մշակի» № 170 յօդուածին, այլ և պ. Միանսարեանցի «На судъ общества» անուանեալ գրուածքին, որ «Մշակի» և այլ լրագիրների միջոցաւ տարածվեցաւ քանի ամիսներ առաջ։ Յուսամ թէ ամենայն բարեխիղճ անձն, անգամ և «Մշակի» պ. Թղթակիցը, մանաւանդ վաճառականութեան կանոնները հասկացող անձինք, որոնք քաջ գիտեն թէ ոչինչ ընկերութիւն, որքան և հաւատ ընծայեն միմեանց անհաշիւ չէ կարող լինել, պիտի հաւատան մաքուր խղճիւ և արդարադատութեամբ իմ առաջ բերած փաստերի ճշմարտութեանը, որ մեր ընկերութեան մէջ ոչինչ դաղտնիք չէ մնացել։

Յուսամ թէ և դուք, մեծապատիւ խմբագիր, այսուհետև անաչառ և անհիմն լուրեր հրատարակելով չը վհատեցնէք այնպիսի մարդկանց, որոնք ազգի բարօրութեան համար չեն խնայում իրանց լուման։ Ես այսպիսի գրուածներով չեմ թուլանում իմ ազգի օգտաւէտ բարեգործութիւնից և մեծայոյս եմ պիտի չը նսեմանայ իմ վարկը և համարումը։ Ես չեմ զարմանում երբէք այդպիսի գրուածքների վրա, որովհետև դեռ չէ պատահած մինչև ցայսօր որ և իցէ մի նշանաւոր բարիք գործող անձ թէ եկեղեցական և թէ աշխարհական, որ ազատ մնային այդպիսի բարուրանքներից։

Իսկ իմ Թիֆլիսի մէջ կանգնած Մարիամեան Յովհաննեան օրիորդաց դպրոցը, իմ հանգուցեալ ամուսնոյս աւանդած վերջին ցանկութեան համաձայն, նրա ամուսնական իրաւունքով և սեփականութիւնով է հաստատած և այդ անունը Կայսերական հաստատութեամբ միշտ պիտի կրէ և իր մշտնջենական ապահովութեամբ յաւիտեան պիտի դաստիարակէ ազգի որբ և աղքատ օրիորդներին։

Օրիորդաց դպրոցների համար «Մշակի» № 169 նախընթաց յօդուածի կարևոր և իրաւացի խնդրի առթիւ աւելացնում եմ երկու խօսք ևս։

Ա. Թիֆլիսի Մարիամեան—Յովհաննեան օրիորդաց դպրոցը անկարծիք բացված է ազգի որբ և աղքատ օրիորդները դաստիարակելու համար ձրիապէս, մինչև անգամ նրանց դպրոցական պիտոյքը հոգալով։ Իսկ եթէ որ և իցէ դաստակերդի ձեռնհաս անձինք ցանկան տարեկան սահմանած չափաւոր վճարքով յանձնել նրան իրանց աղջկանց կրթութիւնը, դրպրոցի դուռը միշտ բաց է, իր ունեցած տեղի չափովը, բայց ոչ երբէք չեղվելով իր նպատակից, այսինքն նախ և առաջ պիտի տեղ տայ որբերի և աղքատների։ Այս նրա ուղղակի պարտքը և նշանակութիւնն է։

Բ. Դպրոցի նպատակն է պատրաստել մայրեր և տնտեսներ բարոյական, ուսումնական և անտեսական կրթութիւնով և այն արհեստներով, որոնք ընտանեկան կեանքի մէջ կարևորութիւն ունեն։ Դպրոցի տեսչութեան ինձ տուած ուսումնական հաշիւների մէջ, առանձին տեղ է բռնում աշակերտուհեաց անցեալ տարվայ ստացած ձեռագործների և կար կարելու համար գոհացուցիչ նշանները։ Իմ ցանկութիւնն է հետզհետէ ընթացիկ ուսմանց հետ աւելացնել կարի, գուլպայի և այլ մանքենաներ, նկարչութեան դասեր և միշտ պատրաստ եմ դպրոցի նպատակի յարմար բարի խորհուրդ լսելու և կատարելու։ Եւ ես շատ պիտի գոհ լինէի եթէ Մարիամեան—Յովհաննեան դպրոցը այդ իր նպատակի ընդարձակ նշանակութեամբ ծառայէր ազգի։

Միայն այդ դպրոցից կազմել կանանց արհեստանոց, հինգարի նպատակից դուրս է։ Տայ Աստուած, որ այլ մէկը ևս օժանդակէ ազգին, համակրելով այդ կարևոր և իրաւացի խնդրին։—

Յովհաննէս Յովհաննեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Տեղեկանում ենք որ Գօղճբուա եղբայրների ցիրկը կրկին վերադարձաւ Թիֆլիս։ Ցիրկի մեզ յայտնի խմբի մէջ կրկին մասնակցելու են՝ օրիորդ Մարի, օրիորդ Օգիւստին և Դուբսկի ընտանիքը, որ եղել է Ս. Պետերբուրգում, Մոսկվայում և Օդէսայում։ Կլոուների մէջ Թիֆլիսի հասարակութիւնը կրկին կը տեսնի Ջերէդի եղբայրներին և մի քանի ուրիշներին։ Գօղճբուա եղբայրները բերել են իրանց հետ քսան պարեկող խաղուտի տիկիններ, առաջնորդութեամբ տիկին Բոսսի-Բէլլինի, որի մասին ասում են թէ առաջ Միլանի «Լա Սկալա» թատրոնում էր պար գալիս։ Ցիրկը կունենայ վաթսուն ձի։ Ասում են որ օրկէսարն էլ այս անգամ բաւական լաւ է։ Լսում ենք որ առաջին ներկայացումն լինելու է գալու կիրակի օրը։

—

Շնորհակալութեամբ ստացանք ՄՈՍԿՎԱՅԻՑ մի նոր հայոց գիրք «Պատմութիւն Աստուածաշունչ Սուրբ Գրոց Հին Կտակարանի» Յարութիւն քահանայ Պօպովեանցի աշխատասիրութիւնը։ Գիրքը տպված է ներկայ 1879 թուին, Մոսկվայում, Ե. Գուդվիլովիչի տպարանում։ Գինը 60 կոպէկ է։ Հասցէն՝ Москва, Арм. пер. домъ Армянск. церкви, свящ. Артемію Попову.

—

Մեզ հաղորդում են ԴԻԼԻՋԱՆԻՑ, որ սեպտեմբեր ամսին այնտեղ անհետացել էր մի երիտասարդ երկրագործ։ Երկար նրան փնտռել էին, բայց չէին գտել։ Կասկածելով երիտասարդի կնոջը սպանութեան մէջ, զիւղացիք նրան սպառնացել էին։ Այդ սպառնալիքներից վախեցած կինը ցոյց էր տուել իր մարդու դիակը անտառի մէջ։ Երիտասարդը խեղդված է եղել։ Յետոյ յայտնվել է, որ կինը մի քանի այլ կանանց հետ գօտիով երիտասարդ երկրագործին խեղդամահ էին արել։ Երիտասարդի դիակը հոկտեմբերի 16-ին էին գտել։ Յանցաւոր կանայք կալանաւորված են և քննութիւնը սկսված է։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղից ոչ հեռու, արքունական ճանապարհի վրա, աղբիւրի մօտ գտնվող խմիչքների կրպակատիրոջը հոկտեմբերի 21-ին սպանված են գտել։ Յայտնի չէ կրպակատէրը ինքնասպանութիւն է գործել, թէ ուրիշները նրան սպանել են։ Գոնեա մինչև այժմ յանցաւորների հետքերը չեն կարողացել գտնել։

—

Պ. Սմբատ Գետատարեանցը խնդրում է մեզ յայտնել, որ նա մի քանի ժամանակ առաջ դիմել էր Երևանցի Ալէքսանդր Թայիրեանին որպէս զի իրան մի պարապմունք տայ։ Զը նայելով, որ պ. Թայիրեանցը Գետատարեանին բոլորովին չէր ճանաչում, իր ծախսով յանձնել էր նրան մի պարոնի հաշւապահութիւն սովորելու։ Այժմ երիտասարդը սովորել է հաշւապահութիւն և հրապարակաւ յայտնում է իր շնորհակալութիւնը պ. Ա. Թայիրեանին։

—

Խնդրում ենք մեր բաժանորդներից նրանց, որոնք դեռ չեն վճարել «Մշակի» բաժանորդագինը, ուղարկել նրան խմբագրութեանը։

—

«Тифл. Вѣстн.» հաղորդում է որ Կովկասեան վրաց ազգաբնակութեան մէջ դրագիտութիւն տարածող ընկերութեան նիստը հոկտեմբերի 21-ին չը կայացաւ, որովհետև անդամների շատ աննշան թիւ ներկայացաւ։ Նիստը յետ է ձգված մինչև մայիս ամիսը, չը նայելով որ այժմ պէտք է ընտրվէին ընկերութեան վարչութեան նոր անդամները։

—

ԴԱՐՍԻՑ հաղորդում են «Тифл. Вѣстн.» լրագրին որ նորերումս գեներալ Ֆրանկինի ձեռքով Դարսի մէջ փակած հայոց դպրոցները, նորից բացվեցան, բոլոր տարակուսութիւնների բացատրվելուց յետոյ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

«Голосъ» լրագրի Կ. Պոլսի Թղթակիցը գրում է թէ Թիւրքիայի զօրքի թուի պակասելը թէև նրա արտաքին քաղաքականութեանը մի աւելի մեղմ ձոյն տուեց, բայց նրա ներքին քաղաքականութիւնը սաստիկ թուլացրեց։ Հայաստանում քուրդերի բարբարոսութիւնները չափ ու սահման չունեն։ Անբաղդ հայոց ազգաբնակութիւնը մաշվում և սպառվում է այդ կիսավայրենի աստանդական ցեղերի բռնութիւնների տակ։ Վերջին ժամանակը Տրապիզոնի և Էրզրումի մէջ յարաբերութիւնները բոլորովին կտրված են, իսկ տէրութիւնը չունի բաւական զօրք քուրդերին զսպելու համար։ Սալիհ-փաշա, որ Կ. Պոլսից ուղարկվեցաւ անկարգութիւններին վերջ դնելու համար, չէ վստահանում և չէ կարող այժ զորձ դնել։ Նա կամենում է ներզործել յորդորանքներով։ Բայց հաղիւ թէ այդ միջոցը ձեռնտու կարող է լինել վայրենի քուրդերի վերաբերութեամբ, որոնց կարող է միայն բռնի այժը զսպել։ Ամեն ուրիշ միջոց թուլութեան նշան կերևայ նրանց աչքին։

Շէյխը, կը սկսի նախ, ինչպէս սովորութիւն ընել յեղափոխական պարագայներում, քրիստոնեայ գիւղերու վրայ դող ու մարդասպաններ ղրկել։ Այս կողմերը կը բնակին Հեռիքի անուն քուրդերը,—ամառը վրանի տակ, իսկ ձմեռը կերթան Մօսուլ, Շէյխին հրամանով կը թալանն 2 նեստորեան գիւղ։ Գիւղացիք Կեվերի կառավարիչին բողոք կուտան։ Կառավարիչը բողոքագիրը բարձի թողի կընէ, բարեբախտաբար այն ժամանակները Կ. Պոլսոյ կառավարութիւնը, սրբազան պատրիարքի և դեսպանաց ճնշման տակ, հեռագիր կը ղրկէր ամեն դաւառ և մինչև իսկ Կեվեր, որ կառավարիչը քրդերուն դէմ խիստ վարմունք ունենայ։ Կեվերի գայմագամը ժողովի կը կանչէ քաղաքին մէջ որչափ որ մեծ և փաթթոցաւոր գլուխներ կը գտնուէր և կորոչուի, յետ երկար վիճաբանութեան, թէ Կ. Պոլսոյ հրամանաց հնազանդելու համար, պէտք կար Շէյխին դէմ հանել դաւառին բովանդակ զօրքերը, որոնց թիւը կը բարձրանար մինչև 450-ի։ Այս բանակը ճանապարհ կիյնայ և յառաջ կը խաղայ դէպի Շէյխ-Իպատուլլահ, և ետ կը պահանջէ նեստորեան գիւղացւոց իբր կողոպուտ առնուած գոյքերը և տաւարը։ Շէյխը և իր համախոհները կը պատասխանեն հրացանի ծայրով—զինուորները պինդ կը կենան—քիւրդերը կը զայրանան, երկու կողմէ մարդ կը սպանուի, մարդ կը վիրաւորուի, և չրջակայ քիւրդերը իմանալով թէ քիւրդ աղայներէն մէկ երկու վիրաւորուած են, կուգան կը միանան ապստամբաց հետ—թուրք զինուորներուն ալ ուրիշ բան չը մնար ընել, բայց եթէ նահանջել և ամուր մի տեղ ապահովութիւն գտնել։ Այս քրդական դիւցազնութիւնը երկու ամիս չարունակեցին. օսմանեան կառավարութիւնը մինչև Պաղդադէ զօրք բերել տուաւ, բայց տեսնելով թէ իր ամեն սպառազինութիւնք փոքրիկ ահ մ'անգամ չեն տար Շէյխին, փոխեց իր դրութիւնը և ջանաց արծաթով յաղթել։ Շէյխը այժմ ցրած է իր 5000 մարդերը և կը գտնուի Մօսուլ, գոհ իր նոր գանձերով։

Շէյխ-Իպատուլլահին այս պատմութիւնը բաւական զմեզ կը համոզէ թէ Փոքր-Ասիան ամենաբարակ մի թելով կապուած է Կ. Պոլսոյ հետ թէ քուրդերը, թէև իսլամ, այնու ամենայնիւ մեծ ախորժակ կը զգան տկար իսլամութեան մը հետ բարեկամ մնալ։

Կըսեն նաև թէ նեստորեան քահանայներ, հայախօս, գաղթական ձեռնալով, դէսուդէն ման են գալիս փող հաւաքելու համար. գուցէ Թիֆլիզ ալ գան, պէտք է ժողովուրդը զգուշացնել այդ խաբեբայներէն, որոնք, իրենց տեղը շատ ալ հարուստ են։

***

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 հոկտեմբերի։ «Правит. Вѣстн.» լրագրում հրատարակված է, որ օգոստոսի 19-ի օրէնքները, որոնց զօրութեամբ զէմնտվոյի և քաղաքային պաշտօնները նշանակվում են նահանգական վարչութեան համաձայնութեամբ, կը տարածվեն որպէս ժամանակաւոր օրէնքներ նոյնպէս և հաշտարար դատաստանների մէջ ծառայող բոլոր անձինքների վրա, բացի նոյն իսկ դատաւորներից։ Մի և նոյն ժամանակ որոշված է, որ զէմնտվոյի և քաղաքային ինքնավարութեան հիմնարկութիւնները ներկայացնում են իրանց ընտրած դատաւորների ցուցակները թէ սենատին, թէ տեղային նահանգապետին կամ քաղաքապետին, որոնք իրանց կողմից ներկայացնում են սենատին իրանց կարծիքը ընտրվածների բարոյական յատկութիւնների մասին։ Իսկ սենատը ընտրվածների հաստատելու ժամանակ՝ վերաստուգում է իրան հաղորդած կարծիքները, համեմատ արդարութեան մինիստրի եզրակացութեան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 հոկտեմբերի։ Կալուզեան, Տուլեան և Բեսարաբեան նահանգները ստորադրված են Մոսկվայի գեներալ-նահանգապետի իրաւասութեանը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ «ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ» ստացել է

1 Սրուանձտեանց—ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ 1 ր. 25 կ.
2 Ս. Մանդինեանց—ԿՐՕՆՔ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ 1 ր. —
3 Բժիշկ Ա. Բաբայեանց ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ 1 ր. —
4 Ա. Բաղմրեանց — ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ — 25 կ.
5 Երկաթէ ԴԻՄԱԿՈՎ ՄԱՐԴԸ ԵՒ ԱՒԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ 1 ր. —
6 Ց. Շիշմանեանի — ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ ՀԱՒԱՔՈՒՄՆ Ա. 1 ր. 15 կ.
7 Փարոս 1879 — — — — Թ. 1 ր. —

ԿՈՒԿԻՈՑ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՑ բակում Մեծապատիւ Մ. ՄԻՐԶԱՅԵԱՆՑԻ հիմնած ՏՂԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ հոգաբարձութիւնը յայտնում է պատուելի հայ հասարակութեան, որ յիշեալ ուսումնարանի համար ԱՇԱԿԵՐՏԱՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ սկսուել է ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ից: Ցանկացողք կարող են իրանց որդիքը ներկայացնել նոյն ուսումնարանում, Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ երեցփոխան պ. Բ. Փիրադեանցին ամենայն օր մինչև առաւօտեան ժամը 9: Աշակերտաց տարիքը 12-ից մեծ և 7-ից փոքր պէտք չը լինեն:

Ընդունելութիւնը տևելու է մինչև ներկա հոկտեմբերի վերջը:

3—3

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՒ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ գրավաճառանոցներում ծախվում են պ. Մսերեանցի հրատարակած տղայոց ընթերցանութեան համար հետևեալ նոր

Մատեանքը.

1. ՀՍԿԱՅԱԿԱՆ ՁԵՌՔԵՐ, անգլիական վէպ, պատկերազարդ. գինն է 10 կոպ.:
2. ԵՂԲԱՅՐ ԵՒ ՔՈՅՐ, գերմանական վէպ, պատկերազարդ (չորս խրօմօլիտօգրաֆիա). գինն է 30 կոպ.:
3. ԱՐՔԱՅԱԴՈՒՍՏՐ-ՎԱՐԴԵՆԻ, գերմանական վէպ, պատկերազարդ (վեց խրօմօլիտօգրաֆիա). գինն է 35 կոպ.:

Նոյն գրավաճառանոցներում կարելի է բաժանորդ գրուել նաև յառաջիկայ 1880 թուականին հրատարակելի «ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերազարդ հանդէսին, որոյ գինն է 2 րուբլի:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի պ. Զարմայր Մսերեանցին 'ի Մոսկուայ:

2—3

ՉԻՒԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ՄԱՔՐԱԾ ՉԻՒԹԻՑ, որ պատրաստված է Մօսկվայի գերագործ.

ԳԻՐՇՖԵԼԴՏԻՑ

Գիւցի ֆրանսիական յայտնի պատիճների անհամեմատ թանգ գները դրդեցին ինձ պարապել նրանց արդիւնագործութեամբ և որովհետև պատիճների պատրաստելը գաղտնիք չէ և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր Չիւթից, ես առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված պատիճները ՖՐԱՆՍԻԱԿԱՆ (ԳԻՒՕՅԻ) ՊԱՏԻՃՆԵՐԻՑ 40% էժան:

Յոյս ունեմ, որ ռուս բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհետև նորա առիթ չունեն ուսաց փողերով պահպանել ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ:

Ծախելու տեղերը. Ռուսաստանի բոլոր դեղատունները և տեղական պահեստները: Գլխաւոր պահեստները. Մօսկվայում, Լուբեանկի դեղատունն Եա. Ի. Գիրշֆելդտի և Բ. Կեօլեր և ընկ. Նիկոլսկիի վրա: Թիֆլիսում Ցուրինօվի և Բոստոմյի դեղատուն:

24—25

Կենտրօնական Գրավաճառանոցում Դվորցովյ փողոցի վրայ, Արծրունու Գալլերէյում, վաճառվում են հետևեալ նոր, գրքերը:

1. Կարմիր լապտեր, փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի պատկերազարդ և կազմած.	գ. —	ր.	50 կ.
2. — Նոյնը առանց կազմի.	—	»	30 կ.
3. Թաւամազ մեղու՝ փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի. պատկերազարդ և կազմած.	—	»	40 կ.
4. Եղբայր և քոյր մանկական վէպ. Թարգ. Զ. Մսերեանի պատկերազարդ	—	»	30 կ.
5. Հսկայական ձեռքեր. մանկական վէպ, Թարգ. Զ. Մսերեանի, պատկերազարդ	—	»	10 կ.
6. Փարոս Հայաստանի. պատկերազարդ հանդէս ընտանեկան ընթերցանութեան համար.	1		— կ.
7. Թորոս աղբար Հայաստանի ճանապարհորդ. Գործ. Գ. Վ. Սրուանձտեանց	1	»	25 կ.
8. Երկունք իններորդ դարու. գործ Ծերենցի.	1	»	— կ.
9. Պատմական ներշնչումներ, գործ. Հրանտ Աստուրի.	—	»	60 կ.
10. Մի կաթիլ արտոսր, զոր կը հեղու. Սիսակ հայ մանկերին վրայ	—	»	35 կ.
11. Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դատախօսութիւն Ս. Արծրունու.	—	»	50 կ.
12. Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, բժ. Ա. Բաբայեանի	1	»	— կ.
13. Մարմնակազմական կամ անատոմիական բառարան Լատիներենից և Ռուսերենից Հայերէն. բժ. Լ. Տիգրանեանցի	1	»	— կ.
14. Կրօնք. Հոգեբանական հետազօտութիւն Ս. Մանդինեանի	1	»	— կ.
15. Հայկական Թատրոն. Վուղյքի իմ վէչեր, փարս երեք պատկերով գործ. Մ. Տէր Գրիգորեանցի	—	»	40 կ.
16. Բեքեր բիձու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ, Թարգ. Ն. Լալայեանցի	—	»	25 կ.
17. Աշնանային երեկոյ գիւղում, վոդըվիլ մէկ արարուածով, փոխադրութիւն Գ. Շահբուդաղեանի	—	»	25 կ.
18. Բանի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով, Թարգ. Գ. Զմշկեանի	—	»	40 կ.
19. Ժանո և Ժանէտ օպէրա-վոդըվիլ, Թարգ. Գ. Շահբուդաղեանցի մէկ գործողութեամբ	—	»	40 կ.
20. Պէպօ. կոմեդիա երեք արարվածով, գործ. Գ. Սունդուկեանի	—	»	30 կ.
21. Պառաւներին խրատ. վօդըվիլ մէկ արարվածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	50 կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասագրքեր Հայերէն, Ռուսերէն և, օտար լեզուների, դասական պետոյքներ ուսումնարանների և աշակերտների համար, Հայերէն Ռուսերէն և Գաղլիերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և գիտութեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ: Օտարաքաղաքացիք իրանց պահանջները պէտքէ ուղարկեն հետևեալ հասցէով.

„Въ Тифлисъ. Въ центральную книжную торговлю"

4—6

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26 — Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց — ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Հոկտեմբերի 25-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	15
Հին 84 պր. մ. արժ. 1000 մ.	1420	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1245	—
Վիդրինի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	235	—
Երկրորդ 5% վիդրինի »	230	—
Մարսելի կուրսը 270—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա	9	45
Վիենայի կուրսը արժէ 121 գլ.	100	—
Դուրեժի բարաթը	4	80
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	310	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	—	—
Շաքարը բրօշկու	7	30
» միւս տեսակը	7	15
» չաքար աւազը	5	30
» տրանզիտը	5	30
» մաքուր վճառած	10	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից	8	—
Միւս տեսակը հին սերմից	7	40
Բուրդը Թուշի	7	50
» Թարաքամի	4	—
Ալիւրը Շորագալու	2	20
» Երևանի	—	—
Գարին	1	40
Մոմը բնաճարպի (стеар.)	12	40
Մետաքսը Նուխվայ	180	—
Կախեթունը	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	50	—
Ֆրիզոնը (լաւը) Ագուլեաց	65	—
Կօֆէն մոկոի	26	—
« լիւանի	22	—
« Մանտինիյօն	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները	1	
Ռուսաստան	2	
Աւստրիա	3	
Անգլիա	4	
Գերմանիա	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդականների ընդունելութիւնը ցերեկվա և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ: Առանձին սենեակներում ամիսը 30—50 րուբլ: Կանանց հիւանդութիւններ բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 րուբլ ամսական:

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան, Բժշկապետ Անանով:

ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլովօ (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:

	առաւօտ:	երեկոյեան.
Թիֆլիսից	9. 21	5. 18
Գօրի	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 59
Բրիօ.	6. 47	
Փոթի	9. 40	
	առաւօտ:	
Փոթիից.	9. 13	
Բրիօ.	12. 13	
Միխայլօվօ	5. 39	1. 37
Գօրի	7. 5	4. 8
Թիֆլիս.	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ.	90	68	38
Գօրի	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Բրիօ	9.	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր: Բագուի տրակտից՝ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի: Բելիկլուչի տրակտից երեքշաբթի և շաբաթ:

ՆԱՄԱԿՆԵՐ

	կոպ.
Բաց նամակ արժէ	2
Ռուսաստան և Եւրօպայի բոլոր երկիրները նամակը արժէ.	7
Ամերիկա	7
Պարսկաստան	7
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 9-ից մինչև 1 ժամը:

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւնների, Քուչարեանց վիրաբուժական և աչքի հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ վիրաբուժական հ., Բէյխ աչքի հ., Վերմիշեվ ներքին հ., Ժուրավլեվ վեներական և կաշու հ., Բաբով կրծքի և ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Աստուածատուրով կանանց հ.:

Հինգշաբթի. Վերմիշեվ և Բուդկովսկի ներքին հ., Քուչարեանց սիֆիլիսի և միայն գործարանների հ., Ժուրավլեվ ջղային հ.: Բաբով կրծքի և ներքին հ.:

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ., Աստուածատուրով վեներական և կաշու հ.:

Շաբաթ. Վերմիշեվ ներքին հ., Բէյխ աչքի հ., Ժուրավլեվ վեներական և կաշու հ.:

Օբերխտ, ատամի հ., ընդունում է իր տանը ամեն ժամանակ աղքատ հիւանդներին Բժշկանոցի տոմսակով:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԵՐԵՒԱՆ. Գ. Տ. Գ. Նամակից լուրեր քաղեցինք: Մնացածը չարժէ տպել:

—ԴԻԼԻՋԱՆ. Ս. Ա. Նամակից լուրեր քաղեցինք:

—ԼԵՆԿՈՐԱՆ. Ս. Միթէ այդտեղ ոչինչ չը գտաք, որ Նուխու մասին էք գրում:

—ՍՏԱՒՐՕՊՕԼ. Ս. Ա. Տ. Զ. Համարներ վաղուց ուղարկում ենք. գինը երեք րուբլ է:

—ԲԱԳՈՒ. Ց. Ստացանք ձեր ապացոյցները, որոնք ոչինչ չեն ապացուցանում: Ամօթ է մեղադրել ամբողջ մի դասակարգ այնպիսի ընթացքի մէջ, որ նա չէ բռնել: Ձեր նամակները և հաղորդած լուրերը զգուշութեամբ գրեցէք:

—ԵՐԵՒԱՆ. Ա. Եր. Ստացանք ձեր նամակը: Կը տպենք հետևեալ համարներից մէկի մէջ: Պարոն Ս. Թ.-ի միջոցով ձեզ մի յանձնարարութիւն արինք. յուսով ենք, որ կը կատարէք:

Дозволено Цензурою 25 Октября 1879 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսօնի Типографія А. А. Михельсона